

ԴԻՎԱՆ ՀԱՅ ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ, պրակ VI, կազմեցին Ս. Ա. Ավագյան, Հռ. Մ. Զանվուլադյան, Երևան, 1977, 330 էջ:

Հայագիր վիճագրերը առաջինը գիտական շրջանառության մեջ է դրել Ստեփանոս Օրբելյանը՝ «Պատմություն նահանգին Սիսական» աշխատության մեջ օգտագործելով իր հայրենի լեռնաշխարհի հուշարձանների մի շարք կարեւոր բնագրեր, որոնց ղգալի մասը այսօր հայագիտությանը հայտնի է նրա շնորհիվ: Երկրորդ հայ պատմիչը, որ վիճագրերն օգտագործել է իբրեւ պատմական հավաստի սկզբնաղբյուր, Զաքարիա Քանաքեռցին է: Նա Ս. Օրբելյանից մոտ 400 տարի հետո խնամքով հավաքել է Հովհաննավանքի արձանագրությունները և դրանք օգտագործել ոչ միայն իր երկասիրության մեջ, այլև, փաստորեն, կազմել հայ վիճագրության առաջին դիվանը:

Հայաստանի վիճագիր հուշարձանների նկատմամբ չետաբերությունն աննախընթաց աճեց XIX դարի կեսերին, կուլտուր-մշակութային համընդհանուր զարթոնքի պայմաններում: Հանդես եկած հայ և օտարազգի մի շարք հետազոտողներ՝ Մ. Բժշկյանը, Ս. Զալալյանը, Հ. Շահաթունյանը, Ն. Սարգսյանը, Մ. Բարխուդարյանը, Մ. Սմբատյանը, Մ. Բրոսսեն, Ե. Լալայանը և այլք հավաքչական աշխատանքից բացի վերծանում և հրատարակում են արձանագրությունները, փրկում դրանք կորստից:

Հայ վիճագրությունը գիտական լուրջ հիմքերի վրա դրվեց մեր դարասկզբում, երբ ասպարեզ իջան Ն. Մառն ու Հ. Օրբելին: Նրանք հիմնավորապես մշակեցին արձանագրությունների ընդօրինակման, վերծանման, հրատարակման և քննական ուսումնասիրության գիտական սկզբունքները: Այդ սկզբունքների հմտալից կիրառողներն ու հետագա զարգացնողները եղան Գ. Հովսեփյանը, Լ. Մելիքսեբեկեկը, Կ. Ղաֆադարյանը և Ս. Բարխուդարյանը:

Հայաստանում և նրա սահմաններից դուրս պահպանված վիճագիր տեքստերի հավաքման հրատարակման վերելքը ներկայումս առանձնապես պայմանավորված է ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի մշտական ուղադրությամբ, որը 1966 թ. սկսած ուսումնասիրողի սեղանին է դնում «Դիվան հայ վիճագրության» մատենաշարի պրակները:

Հայ վիճագրության «Դիվանի» VI պրակը նվիրված է Աղստևի հովտի՝ Դիլիջանի և Իջևանի պատմական հուշարձանների արձանագրություններին: Այն կազմել են Ս. Ավագյանը և Հռ. Զանվուլադյանը: Հեղինակներից Հռ. Զանվուլադյանը հավաքել-ընդօրինակել և վերծա-

նել է Մաթոսավանքի, Զուխտակ վանքի, Հաղարծնի և Գոշավանքի վիճագիր հիշատակագրությունները՝ ձեռքի տակ ունենալով Հովսեփ Օրբելու դեռևս 1917 թ. կատարած ընդօրինակությունները: Ս. Ավագյանը հավաքել և վերծանել է մնացած հուշարձանների արձանագրությունները, իսկ հատորը հրատարակության պատրաստելու ընթացքում ստուգել է նաև Գոշավանքի, Հաղարծնի, Զուխտակի և Մաթոսավանքի վիճագրերը և գրանցում կատարել մի շարք սրբագրումներ ու լրացումներ: Բոլոր հուշարձանների նկարագրությունները, նրանց մասին պատմական ակնարկները, արձանագրությունների բացատրականներն ու բառաքնությունները կատարել է Ս. Ավագյանը:

Պրակում տեղ գտած 365 արձանագրությունների մեծամասնությունը ներկայացվում է առաջին անգամ, որոնք կարևոր ու արժանահավատ տեղեկություններ են հաղորդում պատմական Հայաստանի Գուգարք նահանգի Կողբոփոր, ավելի ուշ՝ Կայեն գավառի XII—XVIII դդ. քաղաքական պատմության, սոցիալ-տնտեսական իրավիճակի, մշակութային կյանքի և պատմական այլ իրադարձությունների վերաբերյալ:

Գրախոսվող պրակում վեր է հանվում Հաղարծնի, Դեղձուտի, Ծովիզի, Գոշի, Աշաջրի, Առաքելոցի և այլ հուշարձանների ճարտարապետական արժանիքներն ու առանձնահատկությունները, արժեքավորվում է նրանց հովանավորությամբ գործող ղարոցների, գրչատների դերն ու նշանակությունը ժամանակի մշակութային կյանքում, քանդակագործական, իրավական, նկարչական, երաժշտական կյանքի ծաղկման պատմությունը, այդ ամենում՝ Մահկանաբերդի Արծրունիների, Զաքարյանների, ինչպես նաև Արցախի իշխանների ջանքերն ու ներդրումները: Պրակում նոր և արժեքավոր լիաստեղծ են տրվում Գոշավանքի և Գանձասարի ու Դադիվանքի (Խութավանք) սերտ կապերի մասին (արձ. 176, 188): Կարևոր են նաև նոր Գետիկ վանքի հիմնադիր Մխիթար Գոշին, Հաղարծնավանքի առաջնորդ, երաժշտագետ և աշխատուր Տարոնացուն, պատմագիր Կիրակոս Գանձակեցուն, Արծրունիներին, Մամիկոնյաններին, Զաքարյաններին, Հաթերքի իշխաններին, Ումեկյան տոհմի ներկայացուցիչներին նվիրված արձանագրությունները՝ մեկնություններով ու բացատրություններով: Գիտական առանձնահատուկ արժեք ունեն Սալահ, Ենոքավան, Ծովիզ, Այգեհովիտ գյուղերի հուշարձան-

ներին վերաբերող էջերը: Առաջին անգամ շրջանառության մեջ են դրվում ոչ միայն Նրանց վիմագրերը, այլև քննվում են նրանց ճարտարապետական ու շինարարական առանձնահատկությունները, ըստ հարկի ճշտվում կամ որոշվում նրանց կառուցման ժամանակն ու հանգամանքները: Թեև հայանցիկ, բայց կարեւոր դիտողություններ են արվում կամուրջների ու իջևանատների վերաբերյալ: «Դիվանի» VI պրակում լուրջ ուշադրություն է դարձվում նաև ռազմապաշտպանական ամրոցների հարցերին ((Դեղձուտ, Աղղան): Կազմողները ստեպ-ստեպ անդրադառնում են ոճական, ինչպես և կոնստրուկտիվ մանրամասներին, հուշարձանների տեխնիկական վիճակին, վերակառուցումներին, հին և նոր տարրերի համադրություններ կատարում ելակետային եզրակացություններ (Մորո-ձորո վանք, Սրվելի վանք):

Կարծում ենք հիմնավորված է ուշ միջնադարում Հաղարծին-Գետաշեն հատվածում մեղիք Շահնազարյանների տիրապետող դիրքի մասին հետևությունը՝ հիմնված Հին Կուենբն բնակավայրի Աստվածածին եկեղեցու 1675 և Հաղարծնի Ս. Ստեփանոս եկեղեցու 1671 թ. արձանագրությունների ճշգրտված վերծանության վրա: Նույն Շահնազարյաններից պետք է համարել նաև Ուորակերտի վանքի գլխավոր եկեղեցու այն վերանորոգողներին, որոնք նրա թմբուկի հարավային նիստին արձանագրել են.

«Աժ ողորմի պարոն Շահնազարին եւ իւր եղբօր Աֆղանդիին, որ այս սր Աստուածածինս շինէցին թ. ՌՃԾ (1701)»: Այստեղ շինեցին բայց ակնհայտաբար օգտագործված է վերանորոգել իմաստով: Ըստ այդմ ընդլայնվում են ուշ միջնադարում Շահնազարյանների տիրույթների սահմանները Հաղարծին-Գետաշեն-Ուորակերտ հատվածում:

Տախտ հանդամասից Դիլիջանի երկրագիտական թանգարան տեղափոխված խաչքարի արձանագրության (արձ. 21) հրատարակումով մեկընդմիջտ որոշվում է մանազկերտցի պարոն Ումեկի կողմից Նոր Գետիկ վանքը և նրա հողատարածությունները (նախկին կալվածքները) չաքարյաններից 40 հազար կարմիր դուկատով գնելու ժամանակի հարցը, այն է 1242—1250 թթ.: Արձանագրության հմուտ վերծանությունը, պակասող մասի՝ ճիշտ կոահումներով լրացումը (ի դեպ, գտնվել է խաչքարի արձանագրված բեկորներից մեկը, որը լրիվ նույնական է ենթադրաբար վերականգնվածի հետ) ընթերցողներին բարձր վստահություն է ներշնչում:

Դոշավանքի 1260 թվակիր մի արձանագրությամբ (արձ. 169) պարզվում է, որ Հովհան-

նես Արմանեցին Գետիկի աշխատավոր ժողովրդին ազատել է ոչ թե պետական-վարչական հարկից, այլ եկեղեցական տուրքից՝ աթոռահարկից, թերևս նպատակ հետապնդելով վանքի շուրջը համախմբելու ցրվող ժողովրդին:

Հայ վիմագիր տեքստերի աղարտված օրինակների հաջող վերծանման նմուշ է Մորո ձորո վանքի 1213 թվակիր արձանագրությունը (արձ. 260): Կարևորն այն է, որ տվյալ դեպքում «գիտական շրջանառության մեջ է դրվում Զաքարյան տոհմի կառուցողական գործունեության և հոգևոր կենտրոնների մասին ընդարձակ տարեգրությունը» (էջ 138): Մասնավոր հետաքրքրություն է ներկայացնում արձանագրության հաղորդումը վավերագրերում չնկատված մի իրողության մասին: Պարզվում է, որ Աթաբեկ Իվանեի «հրամանագրով» հայր եվագրիին տրվել է վանքի առաջնորդության ժառանգական իրավունք, մի երևույթ, որը չէր նկատվել հոգևոր հիերարխիայի միջին աստիճանի սլաշտոնեավարության սիստեմում: Դիլիջանի և Մորո ձորո հիշյալ արձանագրությունները կարևոր ու եզակի «փաստաթղթեր են» ոչ միայն Աղստևի հովտի պատմության համար:

Հեղինակների իրավացի հավաստմամբ պրակում տեղ գտած վիմական արձանագրությունները մեծ մասամբ վատ են պահպանվել. ժամանակի և մարդու ավերածությունների հետևանքով շատ բնագրեր հողմահարվել, եղծվել, անընթեռնելի են դարձել: Պրակի հեղինակներին լիովին հաջողվել է հաղթահարել նախկինում թույլ տրված սխալներն ու անճշտությունները և վերծանություններն ուղեկցել լուսանկարներով ու գծագրերով, որը հնարավորություն է ընձեռել լրացնել բացթողումները և ի հայտ բերել նորանոր հետաքրքիր ու կարևոր իրողություններ անգամ կիսաեղծ բնագրերում, որոնց վերծանումից խուսափել կամ որոնք անստույգ են վերծանել նախորդները: Այսպես, Զուխտակ վանքի Ս. Աստվածածին եկեղեցու մուտքի ըստ ամենայնի հետաքրքիր արձանագրության Մ. Բարխուդարյանի սխալ ընթերցումը՝ ամիրուրեան Լաշայի, ի տևուրեան... Խանին հատվածը սրբագրվել է, ստանալով հետևյալ ճիշտ ընթերցումը՝ [ի քաղ]ա-տուրե[ան] Լաշաի, ի տ[և]ուրե[ան] Խանի (արձ. 1), իսկ Հաղարծնի վանքի գավթի 1217 թ. վիմագրի Մ. Տեր-Մովսիսյանի և Հ. Եղիազարյանի ընթերցած ազնագին մաբգա-րիտն և ամեն տաբնածափ անիմաստ կապակցությունը ստացել է զանգին մաբգաբիտն և ա-ւտաբան ծախաւփ (արձ. 61) ճշտված ձևը: Հաղարծնի վանքի Ս. Ստեփանոս եկեղեցու բնագրերից, մեկը վերաբերում է Ս. Գրիգորի սալարկմանը, որի վերջնամասը վերծանվել էր.

«Եւ Յովաննէս վարդապետի եւ միաբանքս
Ք պատարագ էտուն ի տանի Պարսամա Աբա-
սա Անդրիասի անորոշ և աղավաղ ձևով, որը
ընթերցվել է. տր Յ[ո]վ[աննէս], Ս[ա]րգ[իս]
վ[ար]դ[ապետ] եւ միաբանքս . . . պատարագ
էտուն ի տանի Պարսամա[յ]ի, Ա Բարսղին,
Ա Անդրիասին (արձ. 106): Արձանագրություն-
ների միայն քերականական, շարահյուսական,
բնագրային նմանօրինակ ուղղումներով չէ որ
հին դարերից մեղ ավանդված եղակի տեքստե-
րը տրակում ստանում են իրենց իրական ի-
մաստը: Պրակի հեղինակները կատարում են
նաև բաղմամբիվ ժամանակագրական ճշտում-
ներ: Տիրապետող այն կարծիքը, թե Հաղարծ-
նավանքի Ս. Գրիգոր եկեղեցու գավիթը կա-
ռուցվել է 1181 թ., հիմնովին վերանայվում է
նույն հուշարձանի արևմտյան մուտքի շուրջկալ
արձանագրության քննությամբ: Ինչպես հայտնի
է, այդ նշանավոր բնագրում խոսվում է Հայոց
աշխարհը սելջուկներից աղատագրելու և 1213 թ.
վախճանված Զաքարիայի հիշատակին մատ-
նանշված գավիթը կառուցելու մասին: Ուրեմն
ինչպե՞ս հասկանալ առեղծվածը: 1181 թ.
ստույգ թվագրությամբ արձանագրության կող-
քին Իվանե Զաքարյանը թողել է մի այլ հիշա-
տակություն՝ իր գլխի թագ ու պարծանք Զա-
քարեի հիշատակին նույն գավիթը 1213 թ. կա-
ռուցելու վերաբերյալ: Մի՞թե դրանք ժամա-
նակավրեպ հաղորդումներ են և այնպես էլ
հնարավոր չէ պարզել այդ ուշագրավ կառույցի
հորինման ժամանակը, որն, ի դեպ, ունի շատ
որոշակի կարևորություն: Հեղինակները փարա-
տում են երկմտանքը. նրանց հիմնավոր կոա-
մամբ գավիթը կառուցվել է (արձ. 23) ավելի
վաղ, սակայն, թերևս, ավերվել է սելջուկների
կողմից, ապա հիմնովին վերակառուցել է
Իվանեն 1213-ին և նորոգելու փոխարեն կիրա-
ռել շինել բայը: Կարծում ենք այս մեկնաբանու-
թյամբ արցը պետք է լուծված համարել, սոսկ
ավելացնելով, որ, ինչպես վերևում տեսանք,
1701 թ. Շահնաղարյանները, վերանորոգելով
Հաղարծնից ոչ շատ հեռու, XIII դարի սկզբում
կառուցված խորակերտի վանքը, իրենց համա-
րում են շինող և ոչ թե նորոգող: Առաքելոց
վանքի գավթի բարավորի արձանագրության
թվականը՝ 1244 (կամ 1245), նրա մեջ հի-
շատակվող Սաղուն II-ի որդի ամիրսպասալար
խոթլուբուղայի անվան առկայության շնորհիվ
ճշտորոշվել է՝ 1293 (արձ. 339), որով ինքնին
լուծվում են մի շարք հարցեր: Բանասերները
տարբեր կարծիքներ են հայտնել Հաղարծնա-
վանքի գլխավոր՝ Ս. Աստվածածին եկեղեցու
ճակատակալի ԻջևիվՇի տառաշարքի առթիվ:
Մերթ անտեսվել է սկզբի մասը՝ Ի Զլ և մերթ

էլ այն համարվել է շինության վերանորոգման
ժամանակը (1281 թ.)՝ առանց որևէ կովանի,
իսկ հաջորդ՝ Թվ Շի ընկալվել է որպես թիվ
(Շի=1071 թ.) և այն վերագրվել եկեղեցու
հիմնադրման-կառուցմանը: Վերջնականապես
ճշտված պիտի համարել նաև այդ տառաշար-
քը, մեկնաբանելով՝ Ի Զլ (1281) թվ[ին] շի-
[նեցալ] ձևով (արձ. 81): Նույն վանքի Ս. Ստե-
փանոս եկեղեցու վերանորոգման ժամանակը
բնորոշված էր 1651-ը, սակայն արձանագրու-
թյան մեջ հանդես եկող անձանց ժամանակա-
դրության հիման վրա այն ետ է բերվում քսան
տարով՝ 1671 թ. (արձ. 110): Վիմագրերի
ստույգ վերծանությունը, նրանց ժամանակի
ճշգրիտ որոշումը ունեն պատմագիտական
հսկայական նշանակություն: Այսպես, Մակա-
րավանքի գավթի արձանագրություններից մեկը
անցյալում սխալմամբ թվագրվել է 1207-ով,
որը, թեև վերապահությամբ, գիտական ենթա-
դրության է մղել Ս. Հարությունյանին՝ Արագա-
ծոտն գավառը Վաչե Բ Ամբերդցու իրավասու-
թյանը հանձնելու ժամանակը որոշելու հարցում
(Ամբերդ, Երևան, 1978, էջ 26): Սակայն
պարզվում է, որ Վաչե Ամբերդցին Մակարա-
վանքի գավթի կառուցումը ֆինանսավորած պի-
տի լինի դրանից մոտ 10 տարի հետո (արձ.
322), իսկ վերը նշված թիվը վերաբերում է մի
այլ արձանագրության և այն ոչ թե 1207
(ՈԾԶ) է, այլ՝ 1237 (ՈԶԶ) (էջ 186—188):

Հանրահայտ է, որ տեղական խոսվածքների
ուսումնասիրման իմաստով առավել հարուստ
նյութերը ևս պահպանվում են վիմագրերում:
Եթե ձեռագրերը վերընդօրինակվելով, ըստ էու-
թյան, վերախմբագրվել-վերասրբագրվել են
գրիչների գիտելիքների, լեզվագիտական կարո-
ղությունների, համոզումի, տվյալ ժամանակա-
միջոցում օգտագործվող բառային ֆոնդի հա-
մեմատ, ապա վիմագրերը, հիրավի, մեզ են
հասել անաղարտ, գրված տվյալ ժամանակի
մտածողության լեզվական ճշմարիտ առնչու-
թյուններին համահնչյուն, առանց հետագա միջ-
նորդության և այդ առումով էլ անվիճելի է
նրանց առավելությունը: Հեղինակները կարո-
ղացել են հաղթահարել նաև այս խոչընդոտնե-
րը, ճշտորեն կոահել ուղիղ ձևերից շեղումնե-
րը, խոտորումները կամ բարբառային ներթա-
փանցումները և հասել են վիմագրերի իրական
ու հիմնական իմաստների հստակ մեկնաբան-
մանը:

Աղստևի հովտի հուշարձանների վիմագիր
արձանագրությունների քերականական, բառա-
կազմական յուրատիպ կիրառությունների բա-
ցահայտմամբ մեղանում առաջին անգամ կոնկ-
րետ փորձ է արվում այդ գրավոր հուշար-

ձանները գնահատելու լեզվաբանական առումով, հուշարձաններ, որոնցում ամրարված են սոցիալական, տնտեսական, զրադմունքային առումով հազվագյուտ բառեր, դարձվածներ, կոշումներ, հարկա-պարտության տերմիններ, քերականական սակավադեպ ձևեր, մոռացված անձնանուններ և այլն:

Ցավով պետք է նշել, որ հայկական ճարտարապետության կոթողների հեղինակներից քչերի անունն է հասել մեզ: Այդ իսկ պատճառով ամեն մի նոր քարգործի անվան հայտնաբերում իրավամբ համարվում է երևույթ: Դիվանի VI պրակը ուրախալի նորույթներ է հրամցնում նաև այս առումով: Միջնադարյան աշխարհիկ ճարտարապետության լավագույն նմուշներից համարվող Հաղարծնի վանքի սեղանատունը, ինչպես մինչև հիմա հայտնի էր, կառուցվել է 1248 թ. վանահայր Հովհաննես Արմանեցու մեկենասությամբ, Մինաս ճարտարապետի կողմից: Նորագյուտ արձանագրություններով (արձ. 114, 116) պարզվում է, որ ձեռակերտի իրականացնողները, Մինասից բացի, եղել են նաև Գրիգորես ճարտարապետն ու հավանաբար Մուսեսը: Հայ մշակույթի ասպարեզ են դուրս եկել նաև Հովհաննես քարգործը (արձ. 239) և Երիտասարդը (արձ. 287): Վերջինս Մակարավանքի գլխավոր եկեղեցու բեմաճակատի հիսսքանչ ու խորիմաստ քանդակների հեղինակն է:

Թերևս մանրացած չենք լինի նկատելով, որ յուրահատուկ հետաքրքրություն է ներկայացնում բնագրերի ստույգ վերծանմամբ ի հայտ եկած նոր կամ առաջին անգամ վկայված անձնանունները: Այսպես. Աշոտածեր (արձ. 12ա), Աղեկայճորտ (արձ. 44), Վաշմբեբ (արձ. 50), Նուրնոր (արձ. 98), Խեծի (արձ. 149), Զէլ (արձ. 150), Մաստուն (արձ. 172), Զառնամ (արձ. 174), Աղի (արձ. 190), Սանայր (արձ. 221), Միրան (արձ. 270), Բաղազ (արձ. 279), Խարտեշիկ (արձ. 295), Քոյրոց (արձ. 303), Գժուռ (արձ. 310), Տէրունական (արձ. 316), Մեհնաղ (արձ. 317), Խարիրեկ (արձ. 319), Խաթութիկ (արձ. 330), Եիթինա (արձ. 353) և մի շարք այլ անուններ առաջին անգամ են հանդիպում, հայտնի չէին այլուստ և տեղ չեն գտել Հր. Աճառյանի բառարանում:

Ուշագրավ է նաև գաղափարական-դավանական որոշ խնդիրների քննությունն ու արծարծումը: Սակայն այստեղ նկատենք, որ դժվար է համաձայնել հեղինակների կողմից որոշ բառերի կամ արտահայտությունների վրա հենվելով (օր. դեկան, տրապիզ, քոր) դավանական ուղղության մասին արված եզրակացություն-

ների հետ: Այսպես, Հաղարծնի վանքի 1184 թ. կարևոր բնագրում հավաստվում է խաչատուր Տարոնեցու և ոմն Սուքիասի կողմից Ս. Գրիգոր եկեղեցու նորոգման ու վանքի հողային տիրույթների իրավասության վերահաստատման փաստը: Արձանագրությունն ավարտվում է սեպագրերից հայագիր վիմագրերին փոխանցված անեծքի ֆորմուլայով, ուր «ի թիվս բուն հայկական նղովքների, հանդիպում է նաև՝ Նզովեսցին ի Վառձէ Ածածնէն», որից հետևցնում են, թե դա «անուղղակիորեն ակնարկ է Վարձիա վրացական վանքի հոգևոր գերիշխանության և դավանաբանական միասնության մասին» (էջ 38): Մեզ անհամոզեցուցիչ է թվում «Հաղարծնի հոգևոր ու մշակութային կենտրոնի քաղբեղոնական կողմնորոշման» և առանձնապես Վարձիայի հոգևոր գերիշխանության վարկածը՝ մասնավորապես խաչատուր Տարոնեցու առաջնորդության շրջանում:

Չնայած գործի նկատմամբ ցուցաբերված արտակարգ բծախնդրությանն ու ուշադրությանը, այնուամենայնիվ որոշ վերծանություններ թերևս վերջնական ու անվիճելի չի կարելի համարել, կան բացթողումներ ու վրիպումներ: Այսպես, Դեղձուտի վանքի ականավոր առաջնորդ Առաքելի տապանագրի (արձ. 244) Այս առձան մեական (մենական, առանձին, մենակ) հատվածը այլուր նկատված Այս առձան սեմական է ձևով: Մաթոսավանքի կառուցողական արձանագրության մեջ հիշված Մենոս անձնանունը (արձ. 13) պիտի կարդալ Մենաոս, նույն հաստատության Պետրեի և Համադասպի վիմագրի (արձ. 14) վերջին մասի ով ու խափանէ դատի ի Տէ, Անանէ է ՄՄ հատվածի փոխարեն առաջարկում ենք ով ու խափանէ դատի ի Տէ Եւ նա անէծած է վերծանությունը: Սրանով միաժամանակ կվերանա Անանէ ՄՄ-ն թեկուզ երկմտանքով քաղբեղոնականներին յուրահատուկ անեծք-նղովք յամարելու վարկածը:

Այն բանից հետո, երբ հուշարձանի վերանորոգման նպատակով կապված տախտակամածը հնարավորություն ընձեռեց մոտուստ կարդալու Հաղարծնի վանքի արևմտյան պատի արձանագրությունը (արձ. 42), պարզվեց, որ նրա 2-րդ տողի վերջին էտու բայի կանոնական ձևի փոխարեն կիրառվել է էտուի բարբառային ձևը, իսկ 5-րդ տողի ու խափանէ-ն փորագրված է ով խափանէ: Վերևում ակնարկված Տախտ հանդամասի խաչքարի խիստ կարևոր բնագրից սպրդել է Եւ շաղկապը, որը նախկցված է 6-րդ տողի վերջին ն-ի և ապա հաջորդ տողի վերջից 3-րդ Ա տառի վրա, ուստի և... բռնցիկ, զաւակաւ իւրոյ, ածասէր պա-

բռն Ումեկին կապակցությունը պիտի ընթերցել ...Գոնցին էլ զաւակաց իւրոց եւ ածասէր պարուն Ումեկին:

Աղղանի ներքին լաշինդայա գյուղատեղիի բազիլիկ եկեղեցու բարավորի ներսի ճակատի արձանագրությունը վերծանված է (արձ. 253) հետևյալ կերպ. «Կամ (աւ) բարեր(ար)ին այ, ես՝ Լուսերս միաբանեցա [ած ողոր] ած ող- (որմ)ի ածածնիս, ետու :Մ: սպ (իտ) ալ: Միաբանքս ետ (ուն) Լուերթամերին ու .Բ. ժամ ի տաւնի ծառգարդարին՝ :Ա: հաւր իմին. [ամէն] Շնաւոր, .Ա. մաւր իմ՝ Աւամսթէ. ով խափէ, դատի (յ)այ: Ամէն»: Շարահյուսական անհարթությունները, իմաստային մթագնումները պարզելու մեծ ջանքեր են գործադրել կազմողները, սակայն կիրառված միջամտությունն ու սրբագրումներն անգամ էապես չեն փրկել դրությունը: Աղարտված բառիմաստների ու ներքին կապի անհարթությունների շտկման փորձը վերջնական արդյունքի չի հասցրել, որի հետևանքով էլ, ո՛չ արդարացի, փորագրիչը մեղադրվել է անփութության մեջ:

Արձանագրության տեղը չափազանց խավար է, սակայն հաջողվել է պարզել, որ սկզբից ու վերջից նրան կցված են երկու փոքր հիշատակագրություններ, որոնք խառնվել են հիմնականին և տեղիք տվել աղավաղման: Դրանցից մեկը վերաբերում է Լուսերի ողորմությանը, քանի որ հիմնական բնագրի երկու ժամերը նվիրված են նրա ծնողներին՝ Շնավորին ու Աւամսթին: Արձանագրությունը իրավանում պետք է վերծանել հետևյալ կերպ՝

Կամաւ բարեր[ար]ին այ, ես Լուսերես միաբանեցա Ածածնիս, ետու :Մ: սպ(իտ)ալ. միաբանքս ետուն :Բ: ժամ ի տաւնի ծառգարդարին՝ .Ա. հաւր իմ Շնաւոր [ա], .Ա. մաւր իմ Աւամսթէ: Ով խափա[ն]է դատի [յ] այ:

Ած ող[որմ]ի Թարերին: Ամէն:

Ած ողոր[մ]ի Լուսերին: Ամէն:

Նշենք նաև, որ գյուղի հյուսիսային բարձունքի գերեզմանոցի կոպտակոփ երկու տապանաքարերի ես՝ տր ներսես ե Պաղտայկոլ անվանագրությունները չեն մտել պրակի մեջ:

Պատահում է, որ թեև գծագրերը կատարված են բավարար ու լրիվ, բայց ինչ-որ թերացման պատճառով վերծանված տեքստից դուրս է մնում մի բառ կամ արտահայտություն: Այսպես, Առաքելոց վանքի Ս. Կարապետ խաչքարի մեծ հմտությամբ վերծանված տեքստից (արձ. 340) դուրս է մնացել 4-րդ զեւարպայծառ եւ սխրալի տողը, իսկ Գոշավանքի

համառոտ հիշատակագրություններից մեկի (արձ. 144) :Բ: աւր պատաւագ կապակցությունից՝ աւր (օր) բառը, թեև դրանք կան գծագրերում: Նշենք նաև, որ հատորի մեջ չեն մտել հԱԶԱՏՈՒՐ Ք(Ա)ՀԱՆԱՅ տապանագիրը (Ջուխտակ վանք), ...հԱԶՍ Ի ԲԱՐԵԱԽ[ԱԽ-ՍՈՒԹԻՆ] ՅՈՎԱՍԱԲ Վ[ԱՐ]ԴԱ[ՊԵՏԻՆ] և Ի Թ. ՈԶԴ (1235 թ.) հիշատակագրությունները (Գոշավանք), Հին Կունեն բնակավայրի ընդարձակ գերեզմանատան ամբողջական ու թեթևաշուկ մի քանի խաչքարերի ՌՂԶ—1647 թ., ՌՃԿԱ—1712 թ., զենքերի ու տնային գործածության իրերի հետաքրքիր քանդակներով մի տապանաքարի ՌԶԹ—1639 թ. և մի քանի այլ հիշատակություններ: Կարծում ենք, Հին Կունեն բնակավայրի ուշ միջնադարյան ժամանակների կյանքի գոյատևության, ինչպես և սրտաճմլիկ իմաստի և ուղղագրության առումով հետաքրքիր է նաև նույն գերեզմանոցի հետևյալ անտիպ արձանագրությունը՝ փորագրված շիրմաքարի հարավային և արևմտյան ճակատներին՝ «Ես եմ Փիրումեցի ոռ:ստայ Գրիգորի որդի, իմ հօրըն՝ սիրելի, շատ մորազ մնաց իմ օրտիս. իմ հայրըն մոռորազ ոռունբ, թէ իմ հարսանիս անէ, ԱԾ չիկամեցավ. փոխարէն տապանըս լաւաջօք շինեց: ԱԾ իր վարցըն հատուցանէ: Անարժան Գրիգորըս գրէցի թվ. ՌՄԻԸ (1779) սերգեմբերի ԺԴ (12-ին)»:

Կարևոր ու արժանահիշատակ է նաև Գոշավանքի արևմտակողմի գերեզմանոցի խաչքարերից մեկի ստորին մասի արձանագրությունը (խաչքարն այժմ տեղափոխվել և ժամանակավորապես տեղադրվել է գավթի մուտքի ձախ կողմում): Գոշավանքի զանգակատան կառուցողական արձանագրության մեջ (1291 թ.) արդեն ակնարկ կա վանքը շրջապարսպելու մասին (դրաք պարսպ շուրջ եկեղեցւոյ), սակայն մեր օրերին ոչինչ չի հասել: Բարեբախտաբար խաչքարի նորահայտ արձանագրությունը մասամբ լրացնում է մեր տեղեկությունները պարսպի կառուցման վերաբերյալ, որն է. «Աստուծով մեք Իգնատիոս եւ Դասապետ վարդապետ եւ Կարապետ կակնեցաք զխաչս բարեխաւս մեզ եւ որ մերքն բնեղ: Եղաք զպարսպս: Որք երկրպագէք յիշեցէք ի Քս»:

Նկատելի է, որ մի շարք արձանագրությունների գծագրեր կատարված են ոչ պատշաճ մակարդակով, բնագիր տառաձևերից ակնհայտ շեղումներով (արձ. 241, 278, 307, 340, 350 և այլն), իսկ երբեմն էլ ըստ հարկի չեն նըշվում նախկին հրատարակությունները (արձ. 5, 6, 10, 11, 14):

Պրակը խմբագրված և սրբագրված է մեծ քարեխղճությամբ, թեև սպորդել են աննշան լրիպումներ:

Այս ոչ էական դիտողությունները չեն նսեմացնում գրքի անուրանալի արժանիքները, գիրքը, որն արձանագրությունների ընդգրկման լրիվությամբ, պատմական սպառնիչ մեկնարա-

նություններով, լեզվագիտական հանգամանալից վերլուծությամբ, գիտաբնական մեթոդի կիրառմամբ զգալի ներդրում է հայագիր վիմագրերի հավաքման ու հրատարակման բնագավառում:

Ս. Տ. ՍԱՀՈՒՄՅԱՆ

An Introduction to the Study of Classical Armenian by ROBERT GODEL, Wiesbaden, 1975.

ՌՈԲԵՐ ԳՈԴԵԼ, Դասական հայերենի ուսումնասիրության ներածություն, Վիսբադեն, 1975:

Ստարազգի հայագետների՝ վերջին տասնամյակներում լույս ընծայած երկասիրությունների մեջ ծանրակշիռ տեղ է գրավում Ռոբեր Գոդելի «Դասական հայերենի ուսումնասիրության ներածություն» աշխատությունը: Հեղինակն իր ներածության հրապարակումն արդարացնում է այն բանով, որ Ա. Մեյլեի «Դասական հայերենի համեմատական քերականության ուղղագրության» աշխատության երկրորդ հրատարակությունից (1936 թ.) հետո դասական հայերենի նշյունաբանական, ձևաբանական շատ հարցեր են վիճարկվել, վերանայվել, ուստի անհրաժեշտ էր մի նոր աշխատություն, որը նկատի ունենար վերջին տարիներս լույս տեսած ուսումնասիրությունները, ի մի բերեր դասական հայերենի քերականական այս կամ այն երևույթի մասին եղած կարծիքները:

Աշխատության «Առաջաբանը» թեև հակիրճ է, բայց բովանդակալից, այստեղ շարադրվում են քերականության բաժինների բնութագրական, քերականական իրավությունները քննելու սկզբունքները:

Ռ. Գոդելը դասական հայերենը քննել է լեզվաբանական երկու՝ համաժամանակյա և պատմական հայեցակետերով և ըստ այդմ էլ գիրքը բաժանել է երկու մասի:

Առաջին մասում հեղինակը մի համառոտ ակնարկով ընթերցողին ծանոթացնում է հին հայերենի մեղ հասած բնագիր ու թարգմանական գրավոր աղբյուրներին, Մեսրոպ Մաշտոցի գործունեությանը, հալ ժողովրդի բանահյուսական հին նմուշներին ու լեզվական առումով նրանց անաղարտ լինել-չլինելու խնդրին, նախամեսրոպյան շրջանում ազգային լեզվով գրի ու գրականության հարցին: «Գրադարձություն», թե՛ տառադարձություն» գլխում գերադասություններ տրվում է գրադարձությանը, երբ գրավոր բնագրերի տառերն ու բառերը գրադարձվում են լատինական տառերով ու հնչյունա-

տարրերիչ նշաններով, ըստ դրանց գրության, և ոչ թե արտասանության, ի տարբերություն տառադարձության, երբ լատինական տառերով ու հնչյունատարրերիչ նշաններով գրի են առնում սովյալ լեզվի հնչյունները: Հեղինակը, քննադատելով Հ. Հյուբշմանի երբեմն մի հնչյունի դիմաց երկու նշան ($i = v || u$, $j = y || i$) հատկացնելու սկզբունքին, ընդունում է Ա. Մեյլեի գրադարձության համակարգը, այն տարբերությամբ, սակայն, որ բառասկզբի նախադիրներն ու բառավերջի հոգերը բառից անջատում է գծիկով ($z\text{-amenayn}$, $hög\text{wov-n}$, $y\text{-anapat-n}$):

Վերլուծելով հայերենի ձայնավորական համակարգը, Ռ. Գոդելը գտնում է, որ ե/է հակադրությունը հատուկ է եղել նախահայերեն շրջանին: Դասական շրջանում երկար է-ի և կարճ ե-ի հակադրություն չի եղել, թեև գիտակցվել է դրանց բաց և փակ հնչյուն լինելու հանգամանքը: Համեմայն գեպս, X դարում այդ երկու հնչյունները նույնանում են, բացառությամբ բառասկզբի Ա-ը արմատական բաղաձայնից առաջ վերածվել է երկար, բաց օ-ի:

Նշելով, որ ի և զ հնչյուններ են եղել, Ռ. Գոդելը սահմանում է դրանց գործածության սահմանները. ի-ն հանդիպում է բառասկզբում (լեառն, լսեմ) և յ-ից հետո, իսկ զ-ն՝ բաղաձայններից առաջ (ողջոյն, Բաղց): Կարծում ենք, որ կիրառության սահմանները թերի են, բառասկզբում ի-ից բացի ունենք նաև զ-ով սկսվող բառեր (զենջակ, զակիշ, զօղանջ են):

Աշխատության մեջ համեմատաբար զգալի տեղ է հատկացված վանկային կառուցվածքին: Ընդունված կազադարներ են դիտված (բաղաձայն)-ձայնավոր՝ (Բ)2, (Բ)2Բ, ինչպես նաև (Բ)2ԲԲ, Յույց է տրված հորանջի դիրք վանկատման գործում:

Ձայնավորների կանոնավոր հերթագայությամբ Ռ. Գոդելն անդրադառնում է հնարավորին չափ մանրամասն, որքան թույլ են տալիս